ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 50-Ա **30 հունվարի 2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՖՈՒՏԶԱԼԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ֆուտզալի 2024 թվականի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ֆուտզալի 2024 թվականի մարզային առաջնության անցկացման կանոնակարգը՝ համաձայն N2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Լուսինե Վարդանյանին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ֆուտզալի 2024 թվականի մարզային առաջնության մրցումների անցկացման օրերին համապատասխան հաստատությունում ապահովել բժշկի ներկայությունը:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Մարինե Գյարզոյանին՝ միջոցառման անցկացման գործընթացն իրականացնելու համար ապահովել սույն որոշման առաքումը համայնքներ և համապատասխան կազմակերպություններ:

30.01.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված N1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի հունվարի 30 - ի
N 50-Ա որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ֆուտզալի 2024 թվականի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի

Զազյան Կարեն - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/

Հարությունյան Վանիկ – ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

Վարդանյան Լուսինե - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ

Չարվադարյան Գեղամ- ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Շահբազյան Հասմիկ- ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ

Դաշտոյան Գրիգոր - Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ /համաձայնությամբ/

30.01.2024

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N2

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի

2024 թվականի հունվարի 30 -ի

N 50-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՖՈՒՏԶԱԼԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Նպաստել մարզի համայնքներում ֆուտզալ մարզաձևի մասսայականացման աշխատանքներին.
- Խթանել առողջ ապրելակերպի արմատավորմանը.
- Նպաստել ֆիզիկական պատրաստականության զարգացմանը.

2. ՖՈՒՏԶԱԼԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Մարզային առաջնության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը:

3. ՖՈՒՏԶԱԼԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ֆուտզալի մարզային առաջնությանը կարող են մասնակցել, համայնքապետարանների, հիմնարկ ձեռնարկությունների, ուժային կառույցների հավաքական թիմերը: Թիմերի կազմը՝ 11 մասնակից, որից՝ 10 խաղացող, 1 մարզիչ-ներկայացուցիչ:

4. ՖՈՒՏԶԱԼԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Առաջնությունն անցկացվում է մեկ փուլով: Հայտագրվելուց հետո առաջնության մասնակից թիմերը վիճակահանությամբ կբաժանվեն ենթախմբերի /յուրաքանչյուր ենթախմբում կընդգրկվի 3-4 թիմ/ և կկազմվի մրցումների անցկացման ժամանակացույցը: Ենթախմբերում թիմերը շրջանաձև եղանակով կմրցեն միմյանց հետ: Ենթախմբում առաջին և երկրորդ տեղեր գրաված թիմերը շրջանաձև համակարգով կորոշեն 1-3-րդ տեղերը: Առաջնությունը կանցկացվի Գավառի Գրիշա Վահանի Ափրոյանի անվան մարզադպրոցում՝ 2024 թվականի մարտ-ապրիլ ամիսներին՝ կազմկոմիտեի կողմից ներկայացված ժամանակացույցի համաձայն: Խաղերը կանցկացվեն 2

խաղակեսով՝ յուրաքանչյուր խաղակեսի տևողությունը 20 րոպե, ընդմիջումը՝ 10 րոպե: Խաղին չներկայանալու դեպքում թիմին գրանցվում է պարտություն 0:5 հաշվով:

5. ԾԱԽՍԵՐԸ

Ֆուտզալի մարզային առաջնության մասնակցության հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախս և օրապահիկ, հոգում են գործուղող կազմակերպությունները:

6. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

Ֆուտզալի մազային առաջնությունում առաջին, երկրորդ և երրորդ տեղեր գրաված թիմերը կպարգևատրվեն գավաթներով, հուշանվերներով և հավաստագրերով: Առաջին տեղ գրաված թիմին կհանձնվի նաև փոխանցիկ գավաթ, որը կփոխանցվի հաջորդ տարվա մարզային առաջնությունում առաջին տեղ գրաված թիմին:

7. ՀԱՅՏԵՐԸ

Ֆուտզալի մարզային առաջնության մասնակցության հայտերը ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ է ներկայացվում մինչև 2024 թվականի փետրվարի 19-ը ներառյալ՝ հաստատված համապատասխան կազմակերպության ղեկավարի կողմից: Հայտում պետք է նշվի կազմակերպության անվանումը, էլեկտրոնային հասցեն, կոնտակտային անձի հեռախոսահամարը, մարզիկների անունը, ազգանունը, ծննդյան տարեթիվը և տվյալ կազմակերպությունում զբաղեցրած պաշտոնը:

30.01.2024

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ